
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունն իր ռազմաքաղաքական արտաքին կապերում նախընտրում է համագործակցել այն պետությունների հետ, որոնց քաղաքականությունը չի հակասում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքներին¹: Ռազմական և ռազմաքաղաքական համագործակցությունը, ուղեցույց ունենալով որդեգրած սկզբունքներն ու նպատակները, իրականացվում է նախորոշված ուղղություններով.

ա) ԱՊՀ երկրների հետ՝ հետխորհրդային տարածքում անվտանգության կայուն միջավայրի պահպանման ու ամրապնդման նպատակով,

բ) Եվրոպական զարգացած երկրների հետ,

գ) Հունաստանի հետ՝ Մերձսևծովյան տարածաշրջանում ռազմավարական հավասարակշռություն հաստատելու նպատակով,

դ) ըստ ռազմաքաղաքական նպատակահարմարության՝ կառուցողական ռազմաքաղաքական համագործակցություն մերձավորարևելյան այնպիսի պետությունների հետ, ինչպիսիք են Իրանը, Լիբանանը, Սիրիան, Եգիպտոսը՝ ուղղված տարածաշրջանում առավել ընդգրկուն անվտանգության համակարգի ձևավորմանը,

ե) բազմաբևեռ անվտանգության համակարգի ձևավորման շրջանակներում ասիական երկրների, առաջին հերթին՝ Չինաստանի հետ:

Տարածաշրջանի պետություններից Հայաստանն ու Ադրբեջանը՝ Ղարաբաղի, Վրաստանը՝ Աբխազիայի և Օսիայի հակամարտությունների լուծման հարցում առաջնորդվում են իրենց ազգային-պետական շահերով, որոնք շատ դեպքերում իրարամերժ են: Չնայած բոլոր ջանքերին՝ առկա հակամարտությունների լուծման ուղիները շարունակում են մնալ անորոշ: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, որ ամեն ինչ անում է հարցը խաղաղ կարգավորելու համար, Ադրբեջանի Հանրապետությունը շարունակում է իրականացնել ռազմականացման քաղաքականություն՝ բացահայտորեն խախտելով սպառազինությունների վերահսկման ոլորտում առկա միջազգային համաձայնագրերը: Վերջին տարիներին Ադրբեջանը ձեռք է բերել հարձակողական մեծաքանակ տեխնիկա, և այժմ նրա ռազմական ներուժը գերազանցում է ԵՍՁՈւ պայմանագրով ու Վիեննայի 1999 թ. փաստաթղթով սահմանված առավելագույն թույլատրելի քանակությունները: Այդ երկիրը նաև արհամարհում է սպառազինությունների վերահսկման բնագավառում համաեվրոպական անվտանգությունն ապահովող այս պայմանագրերը՝ անթաքույց խախտելով իր միջազգային պար-

¹ Տե՛ս, օրինակ, **Минасян С.** Стратегия национальной безопасности Республики Армения: процесс принятия и структура документа. Ер., 2007, էջ 5:

տավորությունները: Ռազմականացման նման քաղաքականությունը տարածաշրջանում սպառազինությունների մրցավազք հրահրելու միտում ունի: Այն սպառնում է տարածաշրջանային իրադրության ապակայունացմանը և չի բխում Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խաղաղ, բանակցային ճանապարհով լուծելու և ընդհանրապես տարածաշրջանային անվտանգության ամրապնդման ոգուց:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համակարգում իր կարևորությամբ առանձնանում է նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը: Ղա քաղաքական-իրավական համատեքստում դիտարկվում է ներքին ոչ միջազգային քաղաքական հակամարտությունից միջազգային զինված հակամարտության փոխակերպվելու դինամիկայում: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է պատերազմի մարդասիրական իրավունքի մեթոդաբանական գործիքակազմը դիտարկել էությամբ ու դրսևորման ձևերով, Ղարաբաղյան հակամարտությանը նման զինված հակամարտությունների միջազգային-իրավական նույնականացման առավել լայն համատեքստում՝ այդ գործիքակազմի նորմերի կիրառելիության տեսանկյունից²:

Շարունակվում են Հայաստանի համար էական համարվող տարածաշրջանային անվտանգության ձևավորման բացասական գործոնները: Դրանցից են՝ բաժանարար գծերի ձևավորման միտումները, տարածաշրջանային խնդիրների նկատմամբ միջազգային անվտանգության համակարգերի տարածայնությունները և մոտեցումները, էներգետիկ ռեսուրսների, տնտեսական, հաղորդակցական և այլ ուղիների ներդաշնակ շահագործման հեռանկարները, տարածաշրջանում ընթացող սպառազինման ու վերազինման գործընթացները, հակամարտությունները ռազմական ճանապարհով լուծելու ձգտումները, տարածքային և այլ բնույթի տարածայնություններն ու հավակնությունները:

Հայաստանի հանդեպ *Թուրքիայի* որդեգրած անթաքույց մերժողական քաղաքականությունը տարածաշրջանի անվտանգության միջավայրը ապակայունացնող և բաժանարար գծեր ձևավորող իրական գործոն է: Ընդ որում, այդ մերժողական քաղաքականությունը պայմանավորված է ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայությամբ, այլև 1915 թ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրով: Թուրքիայի իշխանությունների կողմից սեփական հասարակության նկատմամբ իրականացվող ինքնախաբեության քաղաքականությունը, սեփական պատմության կոծկումն ու աղավաղումը հասարակության մեջ ծնում են այնպիսի հիվանդագին երևույթ, ինչպիսին ազգայնամոլությունն է³: Երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործում գնահատելի ջանքեր են գործադրում միջազգային կառույցները, հատկապես Եվրամիությունը: Սեփական պատմության հետ հաշտվելը և Հայոց ցեղասպանությունը ճա-

² Տե՛ս **Յ. Ս. Քոթանջյան**, Ղարաբաղյան զինված հակամարտության կարգավորման և լուծման քաղաքագիտական հիմնահարցերը (մարդասիրական-իրավական, ռազմաքաղաքական և դիվանագիտական տեսանկյուններ) // Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Եր., 2009, էջ 242, 249:

³ Տե՛ս **Калачян Г.** Новые тенденции внешней политики Турции. М., 1995, էջ 14:

նաչելը, Հայաստանի և մյուս հարևանների հետ հարաբերությունների կարգավորումը անհրաժեշտ են Թուրքիային, քանի որ դա ժողովրդավարացման լուրջ խթան կհանդիսանա և իրական բարեփոխումներ իրականացնելու ու Եվրամիությանն անդամակցելու համար լավ նախադրյալներ կստեղծի:

Վերջին ժամանակներս զգալիորեն նվազել է Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ակտիվությունը, որի հետևանքով զգացվում է Հարավային Կովկասում Թուրքիայի դիրքերի թուլացում⁴: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, կարելի է ասել, շեղվել է դեպի արևելք և հարավ: Ընդ որում, այդ քաղաքականության մեջ ավելի ու ավելի մեծ դեր է խաղում կրոնական գործոնը, ինչի ապացույցն էր նաև իսլամական միասնության կոչերով հանդես եկող «Արդարություն և զարգացում» կուսակցության բացարձակ հաղթանակը 2011 թվականի հունիսին կայացած Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում: Հարկ է նշել, որ Թուրքիայի քաղաքականության փոփոխությունը մեծ մասամբ թելադրված էր Անկարայի՝ Եվրամիությանն անդամագրվելու մերժման փաստով: Թեև ԵՄ-ն բացեիքաց չի հայտարարել մերժման մասին, այդ գործընթացի ձգձգումը, ինչպես նաև այլ խոչընդոտների (որոնցից է Հայոց ցեղասպանության ընդունումը) հարուցումը այդ երկրի հասարակության և քաղաքական ուժերի կողմից մեկնաբանվում են որպես գործընթացի մերժման վառ ապացույցներ:

Հարավկովկասյան տարածաշրջանում թուրքական քաղաքականության առնչությամբ պարբերաբար նույնաբովանդակ դիրքորոշումներ են դրսևորվում Թուրքիայի անվտանգության ոլորտը համակարգող ազգային անվտանգության խորհրդի կողմից: Այդ կառույցի գործունեությունն ու իրավական կարգավորման կազմակերպումը իրականացվում են Սահմանադրության և 1983 թ. «Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի և գլխավոր քարտուղարության ազգային անվտանգության խորհրդի» օրենքի հիման վրա: Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի հիմնական խնդիրներն են երկրի ազգային անվտանգության շրջանում քաղաքականության մշակման հետ կապված որոշումների ընդունումը, դրանց իրականացման գործընթացի համակարգումը: Խորհրդի կազմում ընդգրկվում են վարչապետը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, ազգային պաշտպանության նախարարը, ներքին գործերի նախարարը, արտաքին գործերի նախարարը, բանակի, նավատորմի և ռազմաօդային ուժերի հրամանատարները, ոստիկանության գլխավոր հրամանատարը: 2001 թ. Թուրքիայում իրականացված սահմանադրական բարեփոխումների շնորհիվ նշված խորհրդի կազմը զգալիորեն ընդլայնվեց՝ ներառելով վարչապետի երեք տեղակալներին և արդարադատության նախարարին:

Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը շարունակում է մնալ սառեցված վիճակում: Չնայած հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու հարցում ԱՄՆ-ի կողմից

⁴ Տե՛ս **Овсеян Л., Иванов В.** Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии: Динамика и основные тенденции развития. Ер., 2010, էջ 6-7:

Թուրքիայի վրա գործադրվող որոշակի ճնշումներին՝ Թուրքիան արտաքին և ներքին քաղաքական մակարդակներում շարունակում է շեղվել ձեռք բերված պայմանավորվածություններից՝ հարցի կարգավորումը կապելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ: Այդ հարաբերությունների կարգավորման գործում Թուրքիայի որդեգրած բացասական դիրքորոշմամբ հանդերձ՝ երկրի իշխանությունները փորձում են միջազգային հանրությանը մոլորության մեջ գցել, թե իբր իրենք ամենևին չեն ձախողել գործընթացը, և հայկական կողմի հետ շարունակվում է քաղաքական երկխոսությունը: Ընդհանուր առմամբ, ՀՀ իշխանությունների կողմից թուրքական ապակողմնորոշիչ դիվանագիտական ջանքերից հեռու մնալու դիրքորոշումը նպաստում է տարածաշրջանային հարցերում առաջատար դեր ստանձնելու Թուրքիայի նկրտումների զսպմանը:

Տարածաշրջանային անվտանգության համատեքստում ադրբեջանաթուրքական ռազմավարական հարաբերությունները բարելավվում են՝ պայմանավորված նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի սառեցմամբ: Ադրբեջանը շարունակում է իր սպառազինման քաղաքականությունը, ինչն անկասկած բարձրացնում է ռազմաքաղաքական լարվածությունը տարածաշրջանում և Հայաստանին հարկադրում ներքաշվել սպառազինությունների մրցավազքի մեջ: Ընդ որում, Ադրբեջանի սպառազինման գործընթացը ընթանում է ոչ միայն հարձակողական, այլև պաշտպանական ներուժի կուտակման ուղիով, այդ թվում՝ С-300 համակարգերի ձեռքբերմամբ, որը միտված է Ադրբեջանի Հանրապետությունը ապահովագրելու Հայաստանի կողմից զսպման կարողությունների ավելացման դեպքում հնարավոր վտանգներից: Իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ուժով լուծելու մասին Ադրբեջանի պաշտոնատար անձանց կողմից հաճախակի հնչեցվող ռազմատենչ հայտարարություններն⁵ ավելի են խորացնում տարածաշրջանում առկա բաժանարար գծերը և նվազեցնում Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի խաղաղ երկխոսության հնարավորությունները:

Հայաստանի և *Վրաստանի* միջև առկա հարաբերություններն ունեն ռազմավարական նշանակություն, քանի որ նպաստում են Հայաստանի Հանրապետության և ամբողջ Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության մի շարք առաջնային խնդիրների լուծմանը: Դրանք կարևոր են նաև փոխշահավետության տեսանկյունից, որովհետև երկու պետությունների աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս տնտեսական և տրանսպորտային համագործակցությամբ ապահովելու Հայաստանի կապը Ռուսաստանի ու Եվրոպայի այլ պետությունների հետ, և Վրաստանի կապը՝ Իրանի ու Մերձավոր Արևելքի հետ⁶: Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող Հայաստանի շրջափակման պայմաններում Վրաստանն այն երկիրն է, որի միջոցով հիմնականում ապահովվում է Հայաստանի տնտեսական և տրանսպորտային ելքը դեպի արտաքին աշխարհ: Բացի այդ, իր աշխարհագրական դիրքի և աշխարհաքաղա-

⁵ Տե՛ս, օրինակ, 14 Апрель 2009, DAY.AZ, URL: <http://www.day.az/news/armenia/153525.html>

⁶ Տե՛ս **Минасян С.** Армяно-грузинские отношения после «пятнадцатидневной войны» // «Ноев Ковчег», 2009, № 9 (144, сентябрь), էջ 14:

քական զարգացումների շնորհիվ Վրաստանը հանդես է գալիս որպես տնտեսական և առևտրային միջնորդ Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեյջանի միջև: Ռազմական բնագավառում երկու երկրները գրեթե չեն համագործակցում, մինչդեռ ռազմավարական տեսանկյունից հայ-վրացական ռազմական համագործակցությունը նույնպես կլինի փոխշահավետ: Այդ համագործակցության աշխուժացումը կնպաստի տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանն ու անվտանգության ամրապնդմանը: Երկու երկրների անկախացումից ի վեր 2011 թվականի փետրվարին առաջին անգամ ստորագրվեց ՀՀ և Վրաստանի պաշտպանության նախարարությունների միջև ռազմական համագործակցության տարեկան պլան, որի համաձայն՝ կողմերն իրականացրին փորձի փոխանակում բարեփոխումների և ռազմավարական վերանայման, պաշտպանական ոլորտում քաղաքացիական ծառայության ներդրման, խաղաղապահության, ինչպես նաև ռազմական կրթության բնագավառներում:

Ընդհանուր առմամբ, Վրաստանի անվտանգության հիմնական խնդիրները պայմանավորված են ներքաղաքական դաշտի համախմբմամբ: Վերջին տարիներին որոշակիորեն հետին պլան է մղվել Ռուսաստանի հետ առճակատում: Անջատված տարածքները ամեն զնով հետ բերելու ձգտումը Վրաստանի արտաքին քաղաքական ու ռազմավարական օրակարգում այլևս առաջնահերթ չէ, և երկրի իշխանություններն իրենց ջանքերը կենտրոնացրել են տնտեսական ու վարչական բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի վրա: 2008 թվականի օգոստոսյան պատերազմի արդյունքում կորցրած ռազմական ներուժը վերականգնելու նպատակով Վրաստանը շարունակում է ակտիվ համագործակցությունը ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի հետ: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության բարձր մակարդակ վերադառնալու օրինակ է Աֆղանստանում 2011 թվականի ընթացքում վրացական զինված ուժերի զորակազմի ընդլայնումը մինչև 940 զինծառայողի:

Հայ-վրացական փոխհարաբերությունների զարգացման գործընթացներում շարունակում են իրենց ազդեցությունն ունենալ տարածաշրջանային այնպիսի գործոններ, ինչպիսիք են Ջավախքը և մեծաքանակ հայ համայնքի առկայությունը Վրաստանում⁷, տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման շուրջ կողմերի ունեցած տարածայնությունները, տարածաշրջանային գործընթացներում ներգրավվելու և միջազգային զանազան կազմակերպություններին անդամագրվելու կողմերին ընձեռվող հնարավորությունների տարբերությունները և այլն:

Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հիմնավոր հանգամանքներով: Իրանը, արմատական հակասություններ ունենալով Թուրքիայի և Ադրբեյջանի հետ և մերձավորարևելյան տարածաշրջանում լինելով Թուրքիայի՝ տարածաշրջանում ռազմականացված գերտերություն ստեղծելու և ազդեցությունը ընդլայնելու հիմնական հակառակորդներից մեկը, Հայաստանի

⁷ Տե՛ս **Куханидзе А.** Армянское и азербайджанское меньшинства в Грузии. О национальной и внешней политике Грузии // "Этнические и региональные конфликты в Европе-зии". Кн. 1. Центральная Азия и Кавказ. М., 1999, էջ 173-174:

համար ռազմաքաղաքական տեսանկյունից էական հետաքրքրություն է ներկայացնում⁸: Հայաստանի տնտեսական և ռազմաքաղաքական հարաբերությունները Իրանի հետ՝ որպես տարածաշրջանի ամենաազդեցիկ երկրներից մեկի, կարևորվում է տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռություն և կայունություն պահպանելու ընդհանուր ձգտման հանգամանքով:

Լինելով Հայաստանի հարավային սահմանակիցը և ռազմավարական կարևորագույն ճանապարհի ապահովող երկիր՝ Իրանը անցած տարիներին զգալի դեր է խաղացել նաև Հայաստանի տնտեսական կյանքում: Իսկ ահա Իրանի հետ ռազմաքաղաքական կապերի խորացման անհրաժեշտությունը առավել ընդգծվում է երկու գործոնով. Իրանը, որպես Լեռնային Ղարաբաղին փաստացիորեն սահմանակցող պետություն և իրեն իսլամական ժողովուրդների պաշտպան հռչակած երկիր, անկողնակալ և հավասարակշռված դիրքորոշում է դրսևորում ԼՂ հակամարտության նկատմամբ՝ նույնիսկ արժանանալով Ադրբեյջանի պաշտոնական մեղադրանքների:

Իրանի հետ ռազմաքաղաքական կապերի զարգացումը խթանվում է նաև Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի կողմից, քանզի տարածաշրջանում ձևավորվել է հայ-ռուս-իրանական ընդհանուր շահերի որոշակի ամբողջություն: Իրանի զինված ուժերում սպառազինության խորհրդային որոշակի ստանդարտների առկայությունը նախադրյալներ է ստեղծում նաև ռազմական համագործակցության իրական ծրագրերի մշակման համար: Հաշվի առնելով Իրանի զգալի ազդեցությունը իսլամական աշխարհում՝ վերջինիս հետ ռազմաքաղաքական համագործակցությունը կարող է նպաստել նաև իսլամական աշխարհում Հայաստանի նկատմամբ բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը:

Հայ-իրանական ռազմաքաղաքական համագործակցության շրջանակներում, հաշվի առնելով Հայաստանի որդեգրած արտաքին քաղաքականության ուղենիշները, ՀՀ պաշտպանական գերատեսչությունը բավականին ակտիվ շփումներ է իրականացնում Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության հետ՝ հաճախ նաև իրանական կողմի նախաձեռնությամբ: Իրանի հետ ռազմական և ռազմաքաղաքական հարաբերություններում պարբերաբար զգալի տեղաշարժեր են արձանագրվում. կազմակերպվում են զինվորական տարբեր մակարդակների պատվիրակությունների փոխալսելություններ, որոնց ժամանակ հստակեցվում են հայ-իրանական ռազմական և ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման հեռանկարները, տարածաշրջանային անվտանգության խնդիրների նկատմամբ երկու երկրների դիրքորոշումները: Հայ-իրանական ռազմաքաղաքական և ռազմական համագործակցության հնարավոր բոլոր շրջանակների լիարժեք բացահայտումը և գնահատումը Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությանը հնարավորություն կտան Իրանի հետ ծավալելու առավել արդյունավետ գործունեություն:

Թեև անցած տարիների ընթացքում հայ-իրանական ռազմական և ռազմաքաղաքական հարաբերություններում նկատվել է էական ակտիվա-

⁸ Տե՛ս **Акопян В.** Иран на Южном Кавказе: 3+3 против 3–3 // «Третий взгляд», 05.06.2003, էջ 39:

ցում, այնուհանդերձ դրանց լիարժեք զարգացման համար առկա են որոշակի խոչընդոտներ, մասնավորապես՝ Իրանի տնտեսական և քաղաքական շրջանակներում ադրբեջանցիների զգալի ազդեցությունը և կրոնական որոշ շրջանակների ծայրահեղական գաղափարախոսությունը, ինչպես նաև Հայաստանի կողմից՝ արտաքին քաղաքական առաջնահերթություններում ընդգրկված գործընկեր պետությունների հետ Իրանի որոշակիորեն հակասական հարաբերությունները:

Այսպիսով, եթե հարավկովկասյան տարածաշրջանային անվտանգության համատեքստում բնութագրելու լինենք ՀՀ արտաքին ռազմաքաղաքական գործունեությունը, ապա այն կարելի է խմբավորել հետևյալ ուղղություններով՝ տարածաշրջանային անվտանգության ապահովման խթանում, հաղորդակցության ուղիների ապաշրջափակում ու ակտիվացում, արտաքին ուժային կենտրոնների ռազմաքաղաքական ազդեցության հավասարակշռում և Հարավային Կովկասում համապարփակ անվտանգության յուրահատուկ համակարգի երաշխավորում: Դիտարկվող հիմնախնդիրների լուծման ճիշտ ուղիների հնարավորինս միասնական մոտեցումներով մշակման և իրականացման դեպքում Հարավային Կովկասը կարող է վերածվել ամուր տնտեսական, ռազմաքաղաքական ու անվտանգության կառուցակարգեր ունեցող փոխգործակցելի տարածաշրջանի:

ТИГРАН КОЧАРЯН – Военно-политические связи Республики Армении с соседними странами. – Армения априори вовлечена в военные, политические, экономические и иные процессы, происходящие на Южном Кавказе. Все события в регионе непосредственно влияют на военно-политическую ситуацию в стране. Армения, в свою очередь, активно участвует в политической жизни Южного Кавказа, в том числе и в процессах, касающихся безопасности. Внешняя военная политика РА обуславливается рядом факторов, без учёта которых невозможно интегрироваться в региональную военно-политическую и экономическую систему. Вот основные из них: геополитическое положение страны; Нагорно-Карабахский конфликт; стратегическое партнерство с Россией; жизненно важные интересы внерегиональных сил (США, ЕС, Турции и Ирана) в Армении.

TIGRAN KOCHARYAN – Military-Political Relations of the Republic of Armenia with Neighboring Countries. – Armenia is one of the three countries in the South Caucasus region; hence it is integrated in utterly all the military, political, economic and other activities taking place within the region. All the events occurring in the region have direct influence on Armenia's military-political life. Armenia, in its turn, actively participates in the civilian life of South Caucasus, particularly, in activities concerning security issues and military policy's aspects. The foreign military policy of the Republic of Armenia and its participation in issues over peace and military security inside the region is due to several factors without which it would have been impossible to integrate to the regional economic and military-political systems. Here are the main factors: the geographical location of Armenia, the conflict of mountainous Kharaback, military-policy cooperation with Russia, benefits of out-regional forces in Armenia (USA, EU, Turkey and Iran).